




Հաշմանդամությանն առնչվող
տերմինաբանությունն և վարվելակերպ
Արմեն Ազալերդյան, «Ունիստն» ՀԿ ղեկավար

<p>Օգտագործեք բառեր և հասկացություններ, որոնք չեն ստեղծում կարծրատիպեր</p>	<p>Խուսափեք կարծրատիպեր ստեղծող տերմիններից</p>
<p>Հաշմանդամություն ունեցող մարդ, ֆունկցիոնալ խանգարում ունեցող մարդ</p>	<p>Հիվանդ, սահմանափակ կարողություններով մարդ, ՀՈԻԱ</p>
<p>Հաշմանդամություն չունեցող մարդ, կարող է քայլել, տեսնել, լսել և այլն</p>	<p>Նորմալ, առողջ (ի տարբերություն հաշմանդամ անձի)</p>
<p>Անվասայլակից օգտվող մարդ, սայլակավոր մարդ</p>	<p>Անվասայլակին գամված</p>
<p>Ի ծնե հաշմանդամություն, մանկուց հաշմանդամ</p>	<p>Ի ծնե արատ, դժբախտություն</p>
<p>Մանկական կաթված (կամ նման այլ բան) ունի</p>	<p>Տառապում է մանկական կաթվածով</p>
<p>Տարել է պոլիոմիելիթ, պոլիոմիելիթի հետևանքով հաշմանդամություն ունի, հաշմանդամություն է ստացել ինչ-որ բանի արդյունքում</p>	<p>Տառապում է պոլիոմիելիթով, պոլիոմիելիթի հետևանքներից, պոլիոմիելիթի զոհ</p>
<p>Մտավոր հետամնացություն ունեցող մարդ (միայն չափահաս մարդկանց համար)</p>	<p>Թերհաս, մտավոր թերի</p>

<p>Օգտագործեք բառեր և հասկացություններ, որոնք չեն ստեղծում կարծրատիպեր</p>	<p>Խուսափեք կարծրատիպեր ստեղծող տերմիններից</p>
<p>Դառնի համախտանիշով մարդ (երեխա), առևտիզմ ունեցող մարդ</p>	<p>Դառն, առևտիկ</p>
<p>Էպիլեպսիա ունեցող մարդ, ցնցումների և ենթակա մարդ</p>	<p>Էպիլեպտիկ, ցնցումավոր</p>
<p>Հոգեկան խնդիրներ ունեցող մարդ, հոգեկան խանգարում ունեցող մարդ</p>	<p>Գիժ, հոգեկան</p>
<p>Կույր, չտեսնող, վատ տեսնող մարդ</p>	<p>Լրիվ կույր</p>
<p>Լսողության խանգարում ունեցող մարդ, թույլ (վատ) լսող մարդ, չլսող/խուլ մարդ</p>	<p>Խուլ-համր</p>
<p>Շփման դժվարություններ ունեցող մարդ, մարդ, որը չի կարող խոսել, համր մարդ</p>	<p>Համր</p>



Կարծրատիպեր

- Հաշմանդամություն ունեցող անձը հաճախ հիվանդանում է
- Հաշմանդամություն ունեցող անձինք միշտ աղքատ են

Այլ տեսակի կարծրատիպեր

- Հաշմանդամություն ունեցող անձինք «հերոս» են
- Հաշմանդամություն ունեցող անձինք «հաղթահարում» են բոլոր դժվարությունները, միշտ պարտաճանաչ են և այլն

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Երբ խոսում եք հաշմանդամ անձի հետ, անմիջապես դիմեք նրան, և ոչ թե ուղեկցողին կամ սուրդոթարգմանչին, որ ներկա է գրույցին:



Սխալ տարբերակ



Ճիշտ տարբերակ

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Երբ Ձեզ ծանոթացնում են հաշմանդամություն ունեցող անձին, շատ բնական է սեղմել նրա ձեռքը: Եթե մարդը չի կարող ձեռք սեղմել, ողջունեք նրան գլխի շարժումով կամ ժպիտով:
- Եթե անձն ունի լսողության խնդիր՝ իր հետ խոսելիս նստեք այնպես, որ լույսը ձեզ վրա ընկնի, մի փակեք խոսելիս ձեր բերանը՝ չսող անձինք հաճախ կարդում են ըստ շուրթերի:



Սխալ տարբերակ



Ճիշտ տարբերակ

- Եթե հանդիպումը վատ տեսնող կամ կույր մարդու հետ է, ասեք Ձեր անունը և այն մարդկանց անունները, որոնք Ձեզ հետ են: Եթե Դուք խմբում եք, ապա խոսելիս նշեք, թե ում եք դիմում տվյալ պահին և կրկնեք Ձեր անունը:

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Մի շփոթվեք, եթե վրիպում եք թույլ տվել, ասելով՝ «Կտեսնվենք» կամ «Դուք լսե՛լ եք այդ մասին» այն անձին, որը չի կարող տեսնել կամ լսել:
- Չտեսնող անձին ուղեկցելիս քայլեր նրանից մի քիչ առաջ :



Միավ տարբերակներ



Ճիշտ տարբերակ

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Եթե Ձեզ թվում է, թե հաշմանդամություն ունեցող անձին օգնություն է պետք, հարցրեք նրան այդ մասին: Վատագույն դեպքում նա կմերժի: Եթե օգնություն իսկապես պետք է, սպասեք, մինչև այն ընդունեն, ապա հարցրեք, ինչ և ինչպես անել:



Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Հաշմանդամություն ունեցող անձինք ֆունկցիոնալ խանգարում ունեցող նորմալ մարդիկ են: Պետք չէ ակնապիշ նայել նրանց:
- Պետք չէ հաշմանդամություն ունեցող անձին ավելորդ իսկամք տրամադրել, թույլ տվեք լինել վերջինիս հնարավորինս ինքնուրույն:



Սխալ տարբերակ



Ճիշտ տարբերակ

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Թույլ տվեք ձեր երեխային խոսել հաշմանդամություն ունեցող անձանց հետ:
- Պիտակավորեք պահածոներ, այլ ոչ թե մարդկանց:
- Մի լարվեք և եղեք բնական:





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

socincl.coord@gmail.com

includi.mngt@gmail.com